«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

18 նոյեմբերի, 2025 թ. N 31 -L

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կանոնադրության 9.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025թ. նոյեմբերի 18-ի N 31 - Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի

2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով (այսուհետ՝Հանձնաժողով) 2026թ. տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է՝ ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 3.1.5 կետի՝ նպատակ ունենալով ապահովել ինչպես Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը, այնպես էլ՝ Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Գործունեության ծրագրով նախատեսվող միջոցառումների անցկացումն ու աշխատանքների կատարումը պլանավորվել է՝ ելնելով Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթներից:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում/աշխատանք	Նախատեսվող ժամկետ
1.	Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կողմից իրականացրած արտաքին գնահատման արդյունքների	1.1. ուսումնասիրություն	Պարբերաբար՝ համաձայն առկա իրավակարգավորումներով նախատեսված ժամկետների
		1.2. գնահատման արդյունք-ների հիման վրա առա-ջարկվող գնահատա-կանի վերաբերյալ դիր-քորոշման ձևավորում	Պարբերաբար՝ համաձայն առկա իրավակարգավորումներով նախատեսված ժամկետների
		1.3. Պալատի խորհրդին ներկայացում	Պարբերաբար՝ համաձայն առկա իրավակարգավորումներով նախատեսված ժամկետների
2.	Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառա-յությունների շրջանակներում և դրանց հետ կապված գործողությունների (անգործության)	2.1. քննում	Պարբերաբար՝ բողոքների ստացումից հետո 10 օրյա ժամկետում
		2.2. կարգապահական միջոցների կիրառման վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկու-թյունների ներկայացում	Պարբերաբար՝ բողոքների քննումից հետո 7 օրյա ժամկետում

	վերաբերյալ ստացված բողոքների		
3.	Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպությունների (այսուհետ՝ Պալատի կորպորատիվ անդամների) ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկման անցկացում	Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկման անցկացում՝ որակի արտաքին գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով	2026թ. նոյեմբեր
4.	Որակի արտաքին գնահատման գործընթացի բարելավմանն ու զարգացմանն ուղղված առաջարկների ձևավորում և ներկայացում Պալատի խորհրդին	Առկա բաց հարցերի գույքագրում և համապատասխան առաջարկների ներկայացում Պալատի խորհրդին	2026թ. Մարտ
5.	Պալատի կանոնադրու-թյամբ և Պալատի խորհրդի կողմից հաստատված Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգով նախատեսված դեպքերում Պալատի ընդհանուր ժողովի և (կամ) Պալատի խորհրդի կողմից կայացված որոշումների և (կամ) հանձնարարությունների կատարում	Միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության	2026թ. հունվար-դեկտեմբեր

Որակի պահանջների պահպանման և կարգապահական
հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Եդիգարյան